## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **13 հուլիսի 2021թ.**

2021թ-ի հուլիսի 9-13-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Գասպարյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մ/ճ-ի տնօրենի պաշտոնակատար, |
| Վ. Ստեփանյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մ/ճ-ի տնտեսական մասի վարիչ, |
| Մ. Բարսեղյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի մելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի բաժնի վարիչ, |
| Տ. Ջհանգիրյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի մելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի բաժնի գիտաշխատող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Գասպարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, նիստից բացակայում էր ՀԱԱՀ հիմնադրամի մելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի բաժին ավագ գիտաշխատող՝ Ս. Դավթյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ-ի հուլիսի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 09:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված գնման առարկայի ձեռքբերման համար առավելագույն ընդհանուր գինը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր շինարարական աշխատանքներ | 5200000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԵՄՀ ՔԸՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ | ՀՀ, Տավուշի մարզ, Այրում համայնք, գյուղ Պտղավան 3-րդ փողոց | +374 95 142820 | vladimir.hayrapetyan.93@mail.ru | 07624754 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2/1շենք | | | |
| 2 | «ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» Ա/Ձ | ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիս Վանքի Տափ փ, շ8 բն 13 | +374 77 160390 | vip-consalt@mail.ru | 77942468 |
| 3 | «Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ավան-Առինջ, 3/5 շ | +374 77 824282 | handh.limitedcompany@gmail.ru | 01018665 |
| 4 | «ՄԻԳՄԱՆ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արցախի 8/4շ/14 | +374 77 875997 | migman99@mail.ru ; info@eltender.am | 00492694 |
| 5 | «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ, Գեղարքունիքի մարզ ք.Սևան Նալբանդյան փող. շ.44, բն.34 | +374 94 912812 | avarmgroup@mail.ru | 08624127 |
| 6 | «Ֆուլ Հաուս Պրոջեքտս» ՍՊԸ | - | - | - | - |
| 7 | «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Էրեբունու 26, 15 | +374 55 880599 | builderscompany@inbox.ru | 00910116 |
| 8 | «Կ.Ա.Լ.» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան,Տ.Պետրոսյան 40/2, 75 ոչ բնակելի տարածք | +374 41 478808 | akeroby252@gmail.com | 00168174 |
| 9 | «Մեծ Հիմք-1» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Կարապետյան փ. 9 | +374 94 067000 | mets-himq2018@mail.ru | 01284774 |
| 10 | «Մենարշին» ՍՊԸ | ՀՀ, ք. Վանաձոր Տիգրանյան 3/41. | +374 77 146464 | narek.khachatryan2017@bk.ru | 06959476 |
| 11 | «Մուրադյան Շին» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Վարդաշեն *9 փ., 62Դ, բն. 2 | +374 91 186525 | marimharutyunyan@gmail.com | 0482864 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ և ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2021 թվականի հուլիսի 9-ին Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

• «Ֆուլ Հաուս Պրոջեքտս» ՍՊԸ-ի հայտում բացակայում են ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/92 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկի փաստաթուղթը:

• **«ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» Ա/Ձ-ի** կողմից ներկայացված՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, էլեկտրոնային թվային եղանակով հաստատված չէ:

• **«Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ լրացված չէ «ընդհամնեը ՀՀ դրամ» սյունակի անվանումը, իսկ միավորի գները լրացված են «ընդհամնեը ՀՀ դրամ» սյունակի ներքո:

• **«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված

✓ ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, իրական շահառուների վերաբերյալ աղյուսակում բացակայում է մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

✓ ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ բացակայում է կշիռներին վերաբերող սյունակը:

• **«Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը թերի է, մասնավորապես՝ արժեքները ներկայացված են հազարական դրամներով, սակայն աղյուսակում բացակայում է տեղեկատվությունը՝ հզարական դրամնրով ներկայացնելու վերաբերյալ:

• **«ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկի փաստաթղթում, համաձայն Հավելված 2-ի, երկրորդ սյունակում նախատեսված դաշտը թերի է, մասնավորապես՝ «աշխատանքի անվանման» փոխարեն նշել է «ապրանքի անվանումը»:

• **«Մենարշին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկը, համաձայն՝ Հավելված 2-ի, չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ առկա է հաշվարկի սխալ և գնային առաջարկում ներառված արժեք և ԱԱՀ բաղադրիչների ընդհանուր փաստացի գումարը տարբերվում է Ընդհանուր գինը դաշտում տառերով գրված արժեքից:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |

| | | | դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր շինարարական աշխատանքներ | «ԵՄՀ ՔԸՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ | 5200000 | 3904000 | 780800 | 4684800 |
| | | «ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՁ | | 5125100 | 0 | 5125100 |
| | | «Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ | | 3906833 | 781367 | 4688200 |
| | | «ՄԻԳՄԱՆ» ՍՊԸ | | 4103710 | 0 | 4103710 |
| | | «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 3507375 | 701475 | 4208850 |
| | | «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Կ.Ս.Լ.» ՍՊԸ | | 4270750 | 854150 | 5124900 |
| | | «Մեծ Հիմք-1» ՍՊԸ | | 3832417 | 766483 | 4598900 |
| | | «Մենարշին» ՍՊԸ | | 3166666.67 | 633333.33 | 3000800 |
| | | «Մուրադյան Շին» ՍՊԸ | | 4200000 | 840000 | 5040000 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. **«Ֆուլ Հաուս Պրոջեքտս»** ՍՊԸ-ի, **«ԲԻԼԴԵՐՍ»** ՍՊԸ-ի և **«Մենարշին»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

3. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել **«ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» Ա/Ձ-ին, «Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ-ին, «Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ին և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2021 թվականի հուլիսի 13-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. **«ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» Ա/Ձ-ի, «Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ-ի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

2. **«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետներում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ **«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ **«Կ.Ս.Լ.» ՍՊԸ-ի** տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԵՄՀ ՔԸՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ | բավարար |
| | «ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՁ | բավարար |
| | «Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ | բավարար |
| | «ՄԻԳՄԱՆ» ՍՊԸ | բավարար |
| | «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | բավարար |
| | «Ֆուլ Հաուս Պրոջեքտս» ՍՊԸ | անբավարար |
| | «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | անբավարար |
| | «Կ.Ս.Լ.» ՍՊԸ | անբավարար |
| | «Մեծ Հիմք-1» ՍՊԸ | բավարար |
| | «Մենարշին» ՍՊԸ | անբավարար |
| | «Մուրադյան Շին» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժին N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X” | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 1 | «ԱՐՄԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | X | 3507375 |
| | 2 | «Մեծ Հիմք-1» ՍՊԸ | | 3832417 |
| | 3 | «ԵՄՀ ՔԸՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ | | 3904000 |
| | 4 | «Էյչ Ընդ Էյչ» ՍՊԸ | | 3906833 |
| | 5 | «ՄԻԳՄԱՆ» ՍՊԸ | | 4103710 |
| | 6 | «Մուրադյան Շին» ՍՊԸ | | 4200000 |
| | 7 | «ՍՈՒՐԵՆ ՄԻՐԱՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՁ | | 5125100 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

**6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Գասպարյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Ստեփանյան ____________

Մ. Բարսեղյան ____________

Տ. Ջհանգիրյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ____________

PROMOTION